## 18. ՇԱՀ ԽՈՒՄԱՐ

Կէղնի, չէղնի Շարաֆ խան անունով մեկըմ կէղնի, ու ուրին լէ՝ իրեք տղա։ Մեռնելու վախտ տղեկներուն կասե.

— Լաո՛, իմ օսյաթ ամանաթն ձենե էդ է օր թաք, թաք ախչիկ չառնիք ձզիկ կնիկ, էրթաք իրեք քուր դտնաք, առնիք իդաք, էնիք ձզիկ կնիկ։

Էդ մարթու պղտիկ տղի անուն Խալաֆ բեկ կէղնի։ Մարթ մեռնելու ժամանակ բանըմ լէ թանբիհ կենե ուր տղեկներուն։

Կըսե.— Լաո՛, հանդե ես կմեռնիմ, ես գինամ կէրթաք ավ ու խուշի, կօլըրտիք, էդա մըր հողի մեջ Ցանարտաղ կա, էնտեխ չէրթաք օլըրտիք։

Ժամ ու ժամանակմ կմնա, պղտիկ ախպեր ախպրտոց կասե. «Ախպրտանք, մըր կարգվելու ժամանակ կընցնի, մըր հեր մզիկ թանբիհ էրեց, էլնինք էրթանք մզիկ իրեք քուր գտնանք առնեք իգանք»։

Կելնին ընկնին ճամբախ, կէրթան։ Շատ կէրթան, քիչ կէրթան, կէրթան զանկին մարթում տուն մսաֆըր կէղնին։

Հ՝իրիկուն օր կէղնի, կտեսնան էդ մարթուն իրեք ախչիկ կա, կիզան մտնին ու կելնին. էն կասե՝ ես իմ, էն կասե՝ ես իմ։

Պղտիկ ախպեր կասե.— Վալայի, մըր բան էղավ։

Ախչկներու հեր օր կիգա կնստի, կասե մեծ ախպեր.

— Իմ հոր օսյաթ է էրի օր իրեք քուր գտնանք, սորա կարգը-վինք, զքու ախչիկներ կիտա՞ս մզիկ։

Մարթն կասե.— Օր աստված կամեցեր է, կէղնի։

Շարբաթ կխմին, քեֆ ուրախութեն կէնին, զիրեք ախչիկ լէ կբերե կիտա էդ իրեք ախպոր։

Կպառկին քնին, կելնին լուսուն կառնին իգան։ Պզտիկ ախչիկ վըր մեկել էրկու քուրոչ խորոտիկ կէղնի։

Կառնին զուրանց կնկտիք, կելնին օր իգան ուրանց էրկիր։ Թե մեկ, թե էրկու ավուր ճամբախ կիգան, կիգան ըդ Ցանարտաղ։ Մութ կիտա վըր ուրանց, կզարկին զուրանց չադրներ, կնստին։ Կպառկին քնին։ Լուսուն պզտիկ ախպեր կհ՚իմնա, կտեսնա օր ուր մեծ ախպեր էլավ լվացվավ, զձին քաշեց դուրս կհեծնի։

Լլկեց զկնիկ, ասեց.— Ախչի՛, ախչի՛, ելի զքու հալավ հագի, քիչըմ ջուր լից ձեռքերուս վրեն լվացվիմ, իմ ախպրտանք քաշե-ցին զուրանց ձիանք դուրս, կհեծնին։

Կնիկ էլավ հագավ զուր հալվներ, գնաց զփառչ բերեց օր հ՚ըլներ իրկա ձեռքերու վրեն, լվացվեր, մեկ լէ տեսավ հ՚ուշապմ էկեր է, փաթեր է զուրանց չադրի բոլոր, բերեր է զգլուխն ու պոչ գրի վըր իրարու ու կիշքե։ Սիրտ թռավ։ Լփլփալով զինք թալեց չադրի մեջ, իրկան պատմեց։ Էրիկ էլավ դուրս, տեսավ օր օղորդ է, ախպրտանք լէ հեծան զուրանց ձիանք փախան։

Լվացվավ, դարձավ աղոթրնի դեմ, զուր աղոթքն էրեց ու էկավ օր կմտներ չադրի մեջ, հ՚ուշապն վերուց ասեց.

— Խալաֆ բեկ, ըսի մը վախենա, դու իմ ախպերն իս, քու կնիկ լէ իմ քուրն է, քղիկ բանըմ կասիմ, գնա՛ առ ու էկո, իտամ զքու կնիկ առ ու գնա։

Խալաֆ բեկն ասեց.— Ի՞նչ է, ասե տեսնամ։

Հ՚ուշապն ասեց.— Կէրթաս Չին ու Մաչինա թագավորի ախ-չիկ կառնիս հ՚իգաս ընձիկ, կիտամ զքու կնիկ կառնիս էրթաս։ Ես հանդե իմ պոչով կծակիմ զէդա տեխ, կէնիմ ճամբախ, կէրթամ իմ տուն։ Օր էկար, կիգաս կմտնիս, էդա ճամբով կիգաս իմ տուն, կառնիս զքու կնիկն ու կէրթաս։

Խալաֆ բեկն էլավ, առավ խուրջիմ օսկի, հեծավ զուր ծին, պաքեց զկնկա էրեսներ, բարեմնա էղավ ու հ՚ընկավ ճամբախ, գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, գնաց գետիմ ռաստ էկավ, խարիբն ու քոռ մեկ է. հունն չգիներ, քոռաքոռ գնաց հ՚ընկավ կոլ, թե ուր հալվներ թռչան, թե ուր խուրջին։

Հ՚ընցավ գետի էնդին, բացեց զխուրջին, ասեց. «Հանիմ զէ-

դա օսկիք չորցում, չբորբոսնի»։ Հանեց թե զուր հալվներ, թե ղօսկիք փռեց արև օր չորներ։ Ինք լէ նստավ կքթվըտեր, մեկ լէ տեսավ էնտեխեն, մուկ մը էլավ դուրս, խածեց օսկիմ ու գնաց ծըկու մեջ, ձեն չհանեց։ Քիչըմ մնաց հատըմ լէ էկավ տարավ, տղեն էմլէ ձեն չհանեց։ Վերը իրեքին օր էկավ կտաներ, տղեն վերցուց զուր սոլի լաթն ու ընկավ մկան ետև։

Մուկ փախավ մտավ ծակ, ասեց.— Ինչո՞ւ զքու քոչեր կկտրոտիս, ես զքզիկ փորձեցի, ես քու օսկու կարո՞տն իմ, էդա բերնո՞վ կէրթաս Չին ու Մաչինու թագավորի Շահ Խումար ախչիկն բերի։

Տղեն ասեց.— Դու իմա՞լ դինաս օր ես էկեր իմ կէրթամ Շահ Խումարն բերիմ։

Մուկն ասեց.— Ի՞մալ չըմ դինա, էդ խտար բան լէ չգիտնաք, էլ ի՞նչ է մըր քյամալ։

Տղեն յալվարմիշ էղավ, ասեց.— Մո՛ւկ, մո՛ւկ, խուրբան էղնիմ քզիկ, խելքըմ սովրցու ընծիկ, ինչ օր հ՚ուզիս կիտամ։

Մուկն ասեց.— Էկո աստծու հ՚առջև ուխտ էրե օր, ինչ օր բերինք, կես էնինք, ես կիգամ քու հետ, կառնիք զախչիկ, կիգանք։

Տղեն ասեց.— Թըղ էղնի,— էրթում էրեց, ինչ օր բերին, կեսն էղնի ուրին, կես լէ՝ մկան։

Մուկն ասեց.— Վերցու զիս, դիր քու ծոցք ու էրթանք։

Տղեն վերուց զմուկն դրեց ծոցք, հեծավ զուր ձին ու հ՚ընկան ճամբախ, գացին։

Օր գացին, մուկն ասեց.— Տղա՛, տե՛ս, ինչ օր կասիմ քզիկ, իմ խոսքից չելնիս։

Տղեն ասեց.— Թըղ էղնի, իմ քսից ի՞նչ կէրթա։

Ասեց.— Տղա՛, զքու ձիու գլուխ թորկ, ուր օր գնաց կանավ, հ՚ոնի մսաֆըր կէնեք։

Տղեն զուր ձիու գլուխ թորկեց, գնաց պառվում դուռ կանավ։

Պառավ էլավ տեսավ օր ձիավորըմ կանուկ է գուռ։

Ասեց.— Կտրիճ, հ՚որի՞ն իս կանի, հ՚իջի, արի ներս։

Հ՚իջավ, քաշեց ուր ձին կապեց, հանեց լըփըմ օսկի ճխթեց պառվու ձեռք, ասեց.

— Կէրթա՛ս, մզիկ բան կառնիս։

Պառավն զօսկիք օր տեսավ, էլ ուր շապկի մեջ չկաներ։

Կերան խմեցին, պառկան, քնան։ Էլան լուսուն, մուկն ասեց.

— Տղա՛, կելնիս էրթաս շուկեն, եռուն օսկի կխուրդիս, կհ՚ըլնաս քու ճեպ, կելնինք էրթանք ախչկա խեչ։ Ճամբու հետ զէդ մանտր փարեք կհանիս ու կցրփնիս, ճժեր կթափին վրեն, ժոզվին։

Օր կժողվին, դու ասե. «Ասեք՝ աստված ղքու բան հաջողեն։ Կէրթանք կհասնիք Շահ Խումարի դուռ կղարկիս, կիգան կասին. «Հրամեցնք էրթանք ներս». դու կասիս. «Ես ներս չըմ իգա, Շահ Խումարին ասեք թըղ իգա դուրս, բանըմ կասիմ ուրին ու կէրթամ»։ Կբերին կաբպետըմ ծալին կդնին քու տակ, Շահ Խումար լէ կբերե զուր աթոռք թալե դռան մեջ նստի, զիս հանե գողտուտիկըմ թող, կէրթամ մտնիմ կարպետի մեջ։ Շահ Խումարն կասե. «Տղա, հ՚որի՞ն իս էկի, խոսա». ես կասիմ. «Դոր իմն է, անկաճ էրեք զիմ գլխու գալածն խոսամ, սորա դուք խոսեք». բելե դու իսկի չխոսաս. ես օր խոսացի խըլըսա, կելնիմ մտնիմ քու ճեպ։ Ասե. «Շահ Խումար, հ՚էսօր մթնեց, վաղ կիդանք իրարու հետ կխոսանք»։

Տղեն է էլավ գնաց շուկեն, եռուն օսկի խուրդեց, էրեց ղրմեն մանտր փարա, լցեց ճեպ, դառցավ էկավ տուն, զմուկ դրեց ճեպն ու էլավ դնաց։

Ճամբու հետ ղձեռք խոթեց ճեպն, հանեց ու ցրփնեց, մանտր ճժեր թափան վրեն, կժողվեն։

Տղեն ըսեց.— Ըսեք՝ «Աստված ղքու բան հաջողեն». տղեկներ սազեցին բոռալ՝ «Աստված ղքու բան հաջողեն»։

Գնաց, գնաց, հասավ Շահ Խումարի քոշկի դուռ զչբխկ զարկեց, մարթըմ էկավ բացեց, ասեց՝ «Հրամեցեք ներս»։

Տղեն ըսեց.— Ես ներս չըմ հ՚իգա, օդա կկանիմ։ Ասեք Շահ Խումարին թըղ հ՚իգա հուդա բան կասեմ ուրին։

Գացին Շահ Խումարին ասին. «Ըպա չասե՞ս, աղեմ էկեր է, կաներ է դուռ, կասենք արի ներս, չիդար, կասե. «Ասեք Շահ Խումարին թըղ իգա օդա, բան կասիմ ուրին»։

Շահ Խումարն ասեց.— Տարեք չուլըմ գնդեք, դրեք ուր տակ, ես էկա։

Առան չուլըմ, բերին, գնդին դրին տղի տակ։ Շահ Խումարն \ լէ էկավ, թալեց զաթոռքն դռան մեջ ու նստավ, ասեց.

— Տղա՛, հ՚որի՞ն իս էկի, ի՞նչ կասես ընձիկ։

Տղեն գողտուտիկմ հանեց զմուկ թորկեց, գնաց մտավ կարպետի մեկ քոշեն։

Ասեց.— Շահ Խումար, խոսելու դոր էսօր իմն է, նը քումն է, նը տղին,— ասեց,— մարթում մեկ էլավ կէրթեր խուրբաթ, տեսավ օր ճամբու վրեն խնձորիմ ճուղ կա թալուկ, ասեց. «Ափսոս չէ՞, էդա ճյուղ մնա ճամբու վրեն, կոխըռճին, կվերցում էդա տեխ տնկիմ, իսկի չէ ծառըմ կէղնի, կիգան ճամբորդներ կնստին տակ հովին»։ Վերցուց զէդ ճուղ տնկեց ու թորկեց գնաց։ Էն գնաց,

ուրիշ մարթմ էկավ կէրթեր խուրբաթ, տեսավ ճամբու վրեն տունկըմ կեր, ինքն ուրին ասեց. «Էդա ծառ հըմլա մնա կչորնա, պիտի էրթամ առուն կապիմ վրեն օր զորնա, բեդնա էղնի ծառ»։

Գնաց առում հանեց, առավ զջուր էկավ զէդ ծառ ջրեց, թորկեց գնաց։ Էնի գնաց, ուրիշ մարթըմ էկավ, տեսավ օր ճամբու վրեն խնձորիմ ծառ կա տնկուկ։ Ասեց. «Ես պիտի կանիմ զէդա ծառ պահիմ, բար իտա, առնիմ էրթամ»։ Մարդն նստավ էդ տեխ բաքլամիշ էրեց, հար խնձոր էղավ։ Օր խնձոր էղավ, էն մեկել էրկու մարթ դառցան էկան ու զդբրբ դրին իրար. էն ասեց. «Ծառն ես իմ տնկի, խնձոր ընձիկ կհասնի». մեկելն ասեց. «Զջուր ես իմ տվի, ընձիկ կհասնի». ետին մարթ լէ ասեց. «Ես իմ պահի զծառ, ընձիկ կհասնի»։ Հըմկա ձեր խելքով էդ խնձոր վի՞ր կհասներ, ես կասիմ ջուր տվողին կհասներ։

Տղեն ասեց.— Զէ՛, պահողին։

Ախչիկն ասեց.— Անաստվածներ, ջուր տվողին ու պահողին հ՚որի՞ պիտի հասներ, տնկողին կհասներ։

Օր ասեց տնկողին կհասներ, տղեն ասեց. «Դու լէ էդա ջանին կհասնիս»։

Մուկն սլաց, էլավ մտավ տղի ճեպն։

Տղեն ասեց.— Շահ Խումար, ախըր էսօր մթնեց, էսօր կելնիմ էրթամ, վաղ կիգանք կխոսինք հ՚իրարու հետ։

Էլավ թորկեց, էկավ ուր խոնախ։ Պառկան, քնան, էլան լուսուն օր կէրթեն, մուկն տղին ասեց.

— Տղա՛, էսօր կէրթանք, մտնիս ներս, վի չելնիս, էն ճար կնստիս, Շահ Խումար լէ, էն ճարի մեջ դուռըմ կա, կբերե զուր աթոռք կդնե, կնստի։ Կնստի կասե. «Տղա, խոսա՛». դու չըս խոսա, զիս կթողիս, կէրթամ մտնիմ քու օտաց տակ, մեկ քունջ ու կասիմ. «Շահ-Խումար, դորն իմն է»։

Էլան գացին ճամբու հետ, մեկ լէ սաղեց ցըփնել, ճժեր թափան վրեն, կվերցնեն ու կասեն. «Աստված զքու բան հաջողե»։

Գնաց հասավ Շահ Խումարի քոշկի դուռ. զդուռ զարկեց, տըղեմ էկավ դուրս, ասեց.

— Արի ներս։

Ասեց.— Ես չեմ իգա, էդա տեխ կնստիմ։

Գացին բերին աթոռքըմ դրին բակ, տղեն նստավ վրեն։ Շահ Խումար լէ էկավ զուր աթոռք թալեց հ՚օդի դռան հ՚առեջ ու նստավ, ասեց.

— Տղա՛, երեկ էկար չխոսացիր, հ՞որի՞ն իս էկի, ի՞նչ կուղիս։

Տղեն ղմուկն թորկեց, դնաց մեկ քունջրմ մտավ։

Ասեց.— Շահ Խումար, դոր նը քումն է, նը տղին է, իմն է,— ասեց.— Շահ Խումար, իրեք տղա կէղնին, իրարու ախպեր, կելնին կերթան խուրրաթ։ Կերթան խուրբաթ, թե տարիմ կմնան, թե էրկու, մեկն աղեկ հեքմութեն կսորվի, մեկ լէ ճնճղու պես թռնել, մեկ լէ՝ ֆալճութեն։ Կելնին դառնան հ՞իգան ուրանց տուն։ Կիգան ճամբու հետ։ Ֆալճի տղեն կիչքե թուղթ, կասե. «Մրր հեր նեղութենի մեջ է, յամ հասնինք, յամ չհասնինք». միչնեկ տղեն կասե. «Խոզի էդա գեղ հասներ իմ հոր, կաթմ առներ բերան հայ ու հայ էր»։ Պղտիկ տղեն կասե. «Տեսնամ զէդ ջուչեն»։ Կառնե ու կթռնի, կբերե կիտա հոր, կսաղնա էլնի կանի։ Թե հինգ, թե տասն օր նոր կփրցնին, մեկել էրկու տղեն իգան, էն կասե. «Ես սաղցուցի զիմ հեր, ես կնստիմ իմ հոր տեխ թագավոր», էն կասե. «Ես սաղցուցի իմ հեր, ես կնստիմ թագավոր». ես կասիմ հախ էն ֆալ իշքող տըղին կհասնի, դու ի՞նչ կասիս, տղա։

Տղեն կասե.— Հունար հեքիմութեն էնող տղին էր, թե օր էնի չիտեր զուր դեղ, իմա՞լ կսաղներ։

Ախչիկն կվերու կասե.— Անաստվածներ, օղորդ հրմա՞լ է կասեք, թե օր պզտիկ տղեն չառներ դեղն բերեր հասուցներ, հերն ի՞մալ կսաղներ հ՞ելներ։ Թագավորութեն պզտիկ տղին կհասնի։

Մուկն մեկ լէ էկավ մտավ տղի ճեպ։

Տղեն ասեց.— Շահ Խումար, մրր մրժուլին էսօր լէ մնաց, կէլնիմ էրթամ, վաղ կիդամ, իրար հետ կմրժլինք։

Տղեն էլավ դառցավ էկավ՞ուր խոնախ, ախչիկ լէ գնաց ուր հ՞օդեն, պառկավ քնավ։

Պառկան քնան, էլան լուսուն։ Մուկն ասեց.

— Տղա՛, հանդե էսօր կերթանք դեմ կմտնենք ախչկա հ՞օդեն։ Ախչկա ճար կտրեր ա, ուր փորու մեջ էրկու հատ օձ կան, սորվեցուցեր է օր էլնին թափին վրր քզիկ ու խեղդին, աղեկ մառթալրմ կառնիս քու ձեռք, թուրրմ լէ կէձդիս քու վրղնրվեր, կէրթանք։ Օձերն օր էլան կհրռրփան քի, զմառթալ կիտաս ուրանց դեմ, մառթրլի մեջ էրկու հատ սուրութիկ մրխ կան, կէրթան քիսնին էնդոնց գլխներ, տուր թրի հ՞առեճ բրդե դիր գետին։ Օր բրդիր դրիր գետին, ըստ հաղ ախչիկ կհասնի քի, չվախենաս, ես կէրթամ մտնիմ ախչկա ճվերու մեջ կխածնիմ, դու վերու դիր գետին ու չոքի բոկին, քաշե քու թուր, ասե. «Զքու գլուխ կկտրիմ»։ Էնի կասե. «Ցամա՞ն, զիմ գլուխ մ՞կտրի, ես քզիկ, դու ընծիկ»։

Տղեն մկան ասածի պես, էլավ լուսուն ճամբեց շուկից մառթալմ առավ էկավ, թուր կախեց վղից, էլավ ու գնաց։ Գնաց զարկեց զգուռ, էկան բացին, էլավ գնաց վերին գին։

Ախչկա հ՝օդից ներս մտավ, չմտավ, տեսավ օր էրկու հատ սև կանբեթիկ օձ ախչկա բերնեն ծործարցին ու ելան։ Տղեն զմառթալ տվեց դեմ, օձեր օր հրռփացին վըր մառթլին, էրկու սուրութիկ ասեղ կար էդ մառթալի մեջ, օձերու գլխի մեջ խըտվան, տըղեն տվեց զօձեր թրի հ՝առեճ, թութնի պես բրդեց, դրեց դետին։

Օր տղեն զօձեր բրդեց դրեց գետին, ախչիկ էլ չտարավ, քաշեց զթուրն ու էկավ տղի վրեն։ Օր էկավ տղի վրեն, մուկն գնաց մտավ ախչկա թումբան, սազեց գճվեր խածնել։

Տղեն քշեց վըր ախչկան, վերցուց դրեց գետին ու չոքավ փորուն։

— Իմա՞լ իս կտրիմ զգլուխդ, չէ՞ դու ալթ չէղներ։

Ախչիկն ասեց.— Ես ալթ չընք էղնե, աման էդա թերմաշ չթողեց. լո՞ւ էր, մո՞ւկ էր հ՝ընկի թունբանս, ի՞նչ էր, չըմ դինա, լազաթ չտվեց ընծիկ։ Մարամ օր էղավ, զիմ գլուխ մը կտրի, ես քըզիկ, դու ընծիկ։

Էլան առան զիրար, քանիմ օր մանցին իրարու խեչ, վերցին զիրար ու դառցան էկան։

Մուկ, էն տեխ օր ախչիկ ալթ էր էղի, կորեր էր, տղեն ուր օր զարկեց, զարկվավ, չգտավ։

Տղեն էր էկավ էդ գետի պըռունկն օր հասավ, էն տեխ օր հաներ զուր հալվըներ չորցուցեր էր, տեսավ օր քոշք ու սարայիմ կեր էդ տեխ, աշխըրքի մեջ հըմալ քոշք ու սարայ չէր էղի։ Ջահել տըղեմ նստուկ էր փանչարեն. զուրանք օր տեսավ, հ՝իչավ էկավ ցած, ասեց.

— Տղա՛, դու քու խոսքի տերն ի՞ս։

Տղեն շըշկրռավ, մնաց, ասեց.— Ի՞նչ խոսքի տեր։

Ասեց.— Դու էդա տեխ էկեր ի՞ս իսկի։

Տղեն ասեց.— Հա՛, էկա էդա տեխ մուկըմ կեր, էդա քոշք ու սարեն չկեր, նոր էն շինի։

Տղեն ասեց.— Ես էն մուկն իմ։

Խալիֆ բեկն ասեց.— Իմ խոսքի տերն իմ։

Ասեց.— Օր հըմալ է, բռնե զքու կնկա թև կիսինք։

Խալիֆ բեկն բռնեց զկնկա թև։ Տղեն գնաց մըզել քաշեց ու էկավ, վերցուց զթուրն օր կզարկեր, ախչիկ գըռըղտկաց, գունդըմ ժժմունք փրթավ բերնեն էկավ ու տղեն ու ուր քոշկ համբարձան։

Տղեն էլավ առավ զՇահ Խումարն, էկավ, էկավ հ'ուշապի տուն։ Էկավ կանավ հ'ուշապի ծկու դեմ ու բռռաց։ Հուշապն էլավ, էկավ, ասեց.

— Շահ Խումար, ղիս կճանչնա՞ս։

Շահ Խումարն ըսեց.— Հ'որի՞ չըմ ճանչնա, թագավորի տղեն իս,— ասեց,— ես էկա։

Ասելուն պես հ'ուշապն պատռավ, խորոտիկ տղեմ էլավ մեջեն։ Շահ Խումարն օր տեսավ, ախըմ քաշեց ու ընկավ մեռավ, մինակ իրեք կաթ արուն էկավ ուր բերնեն։

Դու մ'ասի, էդ Շահ Խումարն էդ տղի նշանլուն է էղի։ Օձերու թագավոր, բերեր էրեր էր հ'ուշապ, թալի էդ տեխ, առեր էր ղկնիկն ու նստի։

Հ'ուշապն օր պատռավ հ'իրարուց, Խալիֆ բեկն ելավ առավ զՇահ Խումարն զուր կնիկ ու դառցավ էկավ ուր տուն։

Ջուհապ գնաց ախպրտոց, թե չասեք՝ Խալաֆ բեկն առավ Շահ Խումարն ու զուր կնիկն էկան։

Ախպրտանք ելան գացին հ'առեճ, բերին հ'իջուցին ու բռնեցիք զհարսնիք։

Ցոթն օր գոլ ու զուռնեն զարկեց, քեֆ ուրախութեն էրին։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ձըր մուրազին։

Աստծուց իշավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։